**Մրցույթի հայտարարություն**
«ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի, Կանաչուտի, Դեղձուտի միջնակարգ դպրոցներ»-ի միացյալ

կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոց» -ում

2021թվականի նոյեմբերի 8 -ից մինչև նոյեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը15:00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 15:00-ին,

ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոցում

)

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ գ.Վարդաշեն Միեր Մկրտչյան11

Տեղեկությունների համար դիմել 077-91-85-58

Էլ. փոստ vardashen@schools.am

Հեռախոս՝ 094-32-10-18